ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ
«ՏԱՐԵՑՆԵՐԻ ԱՌԱՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՆԱՄՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «1032-11002/2026-ՏԱՏՏ4»

«10» 02 2026 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս գլխավոր քարտուղար Արտակ Մանգասարյանի (այսուհետ՝ պատվիրատու), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» հասարակական կազմակերպությունն (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս նախագահ Արթուր Թորոսյանի (այսուհետ՝ կատարող), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն (1032)» ծրագրի «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ (11002)» միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Պայմանագրով նախարարությունը պարտավորվում է միջոցառման իրականացման նպատակով պայմանագրի 5.1.-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև 4,367,990 (չորս միլիոն երեք հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր իննսուն) ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Միջոցառմամբ նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են պայմանագրի N N 1 և 7 հավելվածներում: Միջոցառումն իրականացվում է Տավուշի մարզի Իջևան քաղաքում՝ ամսական տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող 25 անձի համար:

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ, եթե հաշվետու ժամանակահատվածում (եռամսյակում) պայմանագրում նշված արդյունքային բոլոր ցուցանիշների կատարողականի միջինացված ամփոփ գնահատականը չի կատարվել նվազագույնը 80 %-ով կամ չի ապահովվել շահառուների պլանային թվի նվազագույնը 80 %-ը՝ պայմանագրի 9.6.-րդ կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու միջոցով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել պայմանագրի 6.2.-րդ կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է միջոցառմամբ նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում միջոցառմամբ սահմանված պահանջներին.

դ. լրացել է հավաստագրված սոցիալական ծառայությունը տրամադրելու գործունեության իրականացման համար սահմանված ժամկետը և Կազմակերպությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում լիազորված մարմնին չի ներկայացրել հայտ՝ համապատասխան սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությունը հավաստագրելու համար:

2.1.4. պայմանագիրն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները.

2.2.3. նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հոդվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավելի, քան պայմանագրի N 6 հավելվածով սահմանված ֆինանսական նախահաշվի ծախսային յուրաքանչյուր հոդվածի 10%-ի չափով:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. միջոցառմամբ նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել միջոցառման իրականացման մոնիթորինգ համաձայն սույն պայմանագրի 3-րդ գլխի՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել միջոցառմամբ նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2.-րդ կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է միջոցառման և պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել միջոցառման շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել միջոցառմամբ և (կամ) պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 13-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև դեկտեմբերի 20-ը, նախարարությանը ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն պայմանագրի N 5 հավելվածի, և հաշվետվությունը՝ համաձայն պայմանագրի N 3 հավելվածի (Excel ֆորմատ՝ 2 շիթ) և շահառուների ցանկը՝ համաձայն հավելված 2-ի 2.6-րդ և 2.7 կետերի, ինչպես նաև միջոցառումների իրականացման մասին եռամսյակային հաշվետվություններ՝ մինչև հաշվետու ժամանակահատվածին հաջորդող ամսվա 10-ը, իսկ չորրորդ եռամսյակի համար՝ մինչև դեկտեմբերի 20-ը, և տարեկան հաշվետվություն՝ միջոցառման ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները՝ համաձայն N 2 հավելվածի.

2.4.5. պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը.

2.4.8. պայմանագրի 4.1-ին կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն պայմանագրի N 3 հավելվածի (Excel ֆորմատ՝ 2 շիթ): «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհածախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

2.4.9. միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.10. Հաղթող ճանաչված կազմակերպությունը պարտավորվորվում է մատուցվող ծառայությանն առնչվող իր բոլոր (այդ թվում՝ բանավոր, տեսաձայնային կամ թվային) հրապարակային հաղորդակցություններում, տեղեկատվական կամ իրազեկման նյութերում, միջոցառումների և իրականացվող գործունեության շրջանակներում նշել, որ մատուցվող ծառայությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համաֆինանսավորմամբ:

3. Մոնիթորինգը (ըստ պահանջի)

3.1. Նախարարությունն ըստ պահանջի միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության կողմից նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և (կամ) ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի: «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 57-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա համապատասխան հրամանի ընդունման և դրա ուժի մեջ մտնելու դեպքում՝ նշված հրամանին համապատասխան իրականացվում է մշտադիտարկում:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով միջոցառման շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում իրականացնելու և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Ներկայացված եռամսյակային հաշվետվությունների և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը (N 5 հավելված) և հաշվետվությունը (N 3 հավելված (Excel ֆորմատ՝ 2 շիթ)): Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, նախարարությունը պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2.-րդ կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Եթե պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը ներկայացվում են ոչ պատշաճ կերպով, ապա այս դեպքում նախարարության կողմից 4 աշխատանքային օրվա ընթացքում այն վերադարձվում է՝ առկա թերությունները շտկելու և 3 աշխատանքային օրվա ընթացքում կրկին ներկայացնելու համար: Այն դեպքում, երբ կազմակերպությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության կողմից ներկայացված թերությունները չի շտկում և կրկին ներկայացնում է նույն թերություններով, ապա նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված ժամկետում նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը նախարարությունը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (N 4 հավելված) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե միջոցառմամբ սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N N 1 և 7 հավելվածներում նշված միջոցառմանը չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն նախարարության կողմից չընդունվելու, հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու, ինչպես նաև 4.3 կետում նշված ժամկետում թերությունները չվերացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված միջոցառման կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2.-րդ և 6.3.-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա

գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Նախարարության կողմից պայմանագրի 4.1.-ին կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրի գործողությունը տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է պայմանագիրը ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Այն դեպքում, երբ օրենսդրությամբ նախատեսված կարգով օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո նախարարությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.3. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ https://www.mlsa.am/?cat=142 կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.4. Կազմակերպությունը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ պատշաճ կերպով ծանուցված՝ ծանուցման սույն կետով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը նախարարությունն այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերն իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում մյուս կողմին չծանուցելու դեպքում՝ չծանուցող Կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.6. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.7. Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 5, N 6 և N 7 հավելվածները բաղկացած են 13 էջից, հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ
ք. Երևան, Կառավարական տուն 3	Հասցեն՝ Վ.Աճեմյան 225Ա, 0005 Երևան
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 900011016772	Հ/Հ 220563350069000
ՀՎՀՀ 01506515	ՀՎՀՀ 00900912
Գլխավոր քարտուղար՝ Արտակ Մանգասարյան	Նախագահ՝ Արթուր Թորոսյան
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
2026թվականի 02 «10 »-ին կնքված
N «1032-11002/2026-SUSS4» պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բացի N 7 հավելվածով նախատեսված միջոցառումներից, կազմակերպությունը իրականացնում է նաև հետևյալ լրացուցիչ ծառայությունը.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Գլխավոր քարտուղար՝ Արտակ Մանգասարյան	Նախագահ՝ Արթուր Թորոսյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
2026 թվականի 02 «10»-ին կնքված
N «1032-11002/2026-SUSS4» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N__

1. Ընդհանուր տեղեկատվություն

Միջոցառման անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Միջոցառման իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Գլխավոր քարտուղար՝ Արտակ Մանգասարյան	Նախագահ՝ Արթուր Թորոսյան
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3
2026թվականի 02 «10»-ին կնքված
N «1032-11002/2026-SUSS4» պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ կազմակերպության կողմից կատարված, փոխհատուցման ենթակա փաստացի ծախսերի վերաբերյալ:
- Պայմանագրով սահմանված բյուջետային միջոցների վճարման ժամանակացույցի և ֆինանսավորման գումարների (պլանային) վերաբերյալ

- Կազմակերպությունը հաշվետվությունները ներկայացնում է պայմանագրին կից ներկայացված Excel ֆորմատով՝ 2 շիթով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Գլխավոր քարտուղար՝ Արտակ Մանգասարյան	Նախագահ՝ Արթուր Թորոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4
20~~25~~ թվականի 02 «10»-ին կնքված
N «1032-11002/2026-SUSS4» պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազար դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	Անվանումը	Միջոցառման												
			Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
Լոտ 4. Երևան կամ մարզ	99999999/837	**«Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ»**	364.0	728.0	1,092.0	1,456.0	1,820.0	2,184.0	2,548.0	2,912.0	3,276.0	3,640.0	4,004.0	4,367.99	**4,367.99**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է մինչև ֆինանսական միջոցների նախատեսումը, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Արտյոմ Մանգասարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Նախագահ՝ Արթուր Թորոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 5
20<u>26</u> թվականի <u>02</u> «<u>10</u>»-ին կնքված
N «1032-11002/2026-SUSS4» պայմանագրի

Պատվիրատու	Կատարող
_____	_____
_____	_____
Գտնվելու վայրը _____	Գտնվելու վայրը _____
Հ/h _____	Հ/h _____
ՀՎՀՀ _____	ՀՎՀՀ _____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» _____ 20 թ.

Պետության կողմից դրամաշնորհի ձևով _____ կազմակերպությանը տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ *«___» _____ 20 թ.*

Պայմանագրի համարը՝ _____

Կողմերը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	Անվանումը	Գործառույթի համառոտ նկարագիրը	Արդյունքը		Կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			Ըստ պայմանագրի	Փաստացի	Ըստ պայմանագրի	Փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Գլխավոր քարտուղար՝ Արտակ Մանգասարյան	Նախագահ՝ Արթուր Թորոսյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 6
2026թվականի 02 «10 »-ին կնքված
N «1032-11002/2026-SUSS4» պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ
(ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների մասով)

Դրամաշնորհառու	«Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ
Ծրագրի անվանումը	Տարեցների համալիր խնամքի և աջակցության ծառայություն
Ծրագրի տևողություն	01.02.2026-31.12.2026

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Տոկոս	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Տոկոս ընդհանուրի մեջ
	Աշխատավարձ						
Ա							
1.1	Սոցիալական աշխատող	100	հաստիք	0,5	52,000	572,000	13,1
1.2	Սոցիալական սպասարկող	100	հաստիք	2	208,000	2,288,000	52,4
1.3	Բուժքույր	100	հաստիք	1	104,000	1,144,000	26,2
1.4	Ծրագրի համակարգող	100	հաստիք	0,25	33,090	363,990	8,3
	Ընդամենը Ա						4,367,990
Բ	Ծրագրային ծախսեր						
	Ընդամենը Բ						
Գ	Գործուղում						
	Ընդամենը Գ						
Դ	Վարչական ծախսեր						
	Ընդամենը Դ						
	Ընդամենը					4,367,990	

Դրամաշնորհառու	«Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ
Ծրագրի անվանումը	Տարեցների համալիր խնամքի և աջակցության ծառայություն
Ծրագրի տևողություն	01.02.2026-31.12.2026

ՀՀ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ		
1.1	Սոցիալական աշխատող	572,000	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ
1.2	Սոցիալական սպասարկող	2,288,000	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ
1.3	Բուժքույր	1,144,000	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ
1.4	Ծրագրի համակարգող	363,990	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ
Ա2	Ղեկավար անձնակազմի աշխատավարձ		
	Ընդամենը Ա2		
	Ընդամենը Ա		
	Ծրագրային ծախսեր		
	Ընդամենը Բ		
Գ	Գործուղում		
	Ընդամենը Գ		
Դ	Վարչական ծախսեր		
Ընդամենը Դ			
	Ընդամենը	4,367,990	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Արուսյակ Մխիթարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Նախագահ՝ Արթուր Թորոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 7
2026թվականի 02 16-ին կնքված
N «1032-11002/2026-SUSS4» պայմանագրի

«ՏԱՐԵՑ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

«Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» միջոցառման հիմնական նպատակն է խնամքի տրամադրումը միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից ուղեգրված անձանց՝ անհատական սոցիալական ծրագրի համաձայն:

ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1744-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված են տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող շահառուների խմբերը, տնային պայմաններում խնամքի տրամադրման կարգը, պայմանները, չափորոշիչները, ծառայությունների ձևերն ու տիպերը, մասնագետների հաստիքային միավորները և այցելությունների հաճախականությունը: Ծառայությունները տրամադրվում են շահառուին իր տանը՝ ժամը 9:00-18:00 ընկած ժամանակահատվածում:

Սույն միջոցառման համար դրամաշնորհը տրամադրվում է մրցույթում հաղթող հավաստագրված կազմակերպությանը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ բացառապես միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից ուղեգրված շահառուներին տնային պայմաններում խնամքի ծառայություններ տրամադրելու նպատակով: Կարևոր պայման է շահառուների պլանային թվի առնվազն 10 տոկոսի (ոչ ամբողջական լինելու դեպքում՝ կլորացումը դեպի վեր)՝ Որոշման N 2 հավելվածով սահմանված «Ա» խմբում դասակարգված լինելը:

Միջոցառումն իրականացվում է 28 լոտով: Կազմակերպությունը հայտում պետք է նշի ծառայության իրականացման ճշգրիտ տարածքը (քաղաքը, համայնքը, վարչական շրջանը)՝ իր համապատասխան աշխատողներով: Դրամաշնորհը կարող է իրացվել միայն տվյալ լոտի շահառուներին տրամադրվող խնամքի մատուցումն իրականացնող՝ որոշման N 2 հավելվածի 76-րդ կետում սահմանված հաստիքային միավորների աշխատավարձի վճարման նպատակով, ընդ որում, հատուկ (մասնագիտացված) ծառայություններ մատուցող կազմակերպությունը, առաջնորդվելով գործող օրենսդրությամբ, աշխատողներին վճարում է ամսական 30 տոկոս հավելում: Կազմակերպության հաստիքացուցակում լիազոր մարմնի համաձայնությամբ թույլատրվում է ներառել Որոշման N 2 հավելվածի չափորոշիչներից տարբերվող հաստիքներ և հաստիքային միավորներ՝ համաձայն Որոշման N 2 հավելվածի 20.1 կետի: Ցանկացած պարագայում որոշման N 2 հավելվածի 76-րդ կետով սահմանված հաճախականությունը պետք է պահպանվի:

Անվանում	Համառոտ բովանդակություն	Կատարման ենթակա գործառույթների նկարագիր	Ակնկալվող արդյունքային ցուցանիշներ և գնահատման չափանիշներ	Ժամ կետ	Պահանջվող գումար
Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց (այսուհետ՝ շահառու) տնային պայմաններում խնամքի ծառայություններ	Խնամքի տրամադրում միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից ուղեգրված անձանց՝ անհատական սոցիալական ծրագրի համաձայն	Տնային պայմաններում շահառուներին մատուցվում են հետևյալ ծառայությունները՝ 1) խնամքի ծառայություններ հայցող շահառուի անհատական սոցիալական կարիքի գնահատում և գնահատված սոցիալական կարիքին համարժեք ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում. 2) անհատական սոցիալական ծրագրի կազմում. 3) խնամքի ծառայությունների տրամադրում շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան,	1) կենցաղային սպասարկում՝ սոցիալական սպասարկողի կողմից շահառուի անձնական հիգիենայի ապահովում, բնակարանի մաքրում, լոգանքի կազմակերպում, գնումների իրականացում, կոմունալ վարձավճարների մուծում, սննդի կազմակերպում, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերում, անհրաժեշտության դեպքում՝ կերակրում, լրացուցիչ գործառույթներ՝ սոցիալական աշխատողի և բուժքրոջ ցուցումով՝ կատարելով այցի գրառում շահառուների անհատական ծրագրերում և տանը գտնվող մատյաններում. 2) բժշկական օգնություն և սպասարկում, բուժքրոջ կողմից բժշկի նշանակումների կատարում (ներարկում, դեղերի տրամադրում և այլն՝ հաշվի առնելով այն պարտադիր պայմանը, որ աշխատողները ենթակա են բժշկական զննության՝ համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի թիվ 347-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված պարտադիր բժշկական զննության ցանկի 3-րդ կետի), ըստ անհրաժեշտության՝ բժշկի կանչի գրանցում, սպասարկող պոլիկլինիկա այցելության կազմակերպում կամ այլ բժշկական հաստատություններ ուղղորդում և ուղեկցում, ստացիոնար բուժման նպատակով հաստատություններ ընդունվելու գործում աջակցության ցուցաբերում, աջակցում դրանցում խնամքի իրականացմանը, բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպում, հատուկ (մասնագիտացված) խնամքի տրամադրման դեպքում նաև՝ <u>հոգեբույժի շաբաթական առնվազն մեկ այց</u>՝ բուժքույրերի և բժիշկների այցերի մասին կատարելով գրառում շահառուների անհատական ծրագրերում և	31.12.2026	4,367,990 (չորս միլիոն երեք հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր իննսուն)

		մասնավորապես՝ • կենցաղային սպասարկում. • բժշկական օգնություն և սպասարկում. • սոցիալ-հոգեբանական օգնություն. • խորհրդատվական օգնություն: 4) պայմանագրում նշված այլ ծառայություններ: Կազմակերպությունը պետք է ղեկավարվի. • «Սոցիալական աջակցության մասին» օրենքով, • ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1744-Ն որոշմամբ, • պայմանագրում նշված այլ իրավական ակտերով:	տանը գտնվող մատյաններում. 3) սոցիալ-հոգեբանական օգնություն՝ սոցիալական աշխատողի կողմից շահառուի անհատական սոցիալական կարիքի գնահատում տարեկան առնվազն երկու անգամ, ուղղորդում, ուղեկցում և համապատասխան աջակցության ցուցաբերում, աջակցող միջոցներով ապահովելու գործընթացի կազմակերպում, շահառուի նախաձիրությունների բացահայտում և տարաբնույթ ծառայությունների և միջոցառումների կազմակերպում, այդ թվում՝ էքսկուրսիաների կազմակերպում, տոների ու հիշարժան օրերի նշում և այլն՝ եռամսյակն առնվազն մեկ անգամ՝ ապահովելով յուրաքանչյուր միջոցառմանը շահառուների ընդհանուր թվի առնվազն 80 %-ի մասնակցությունը, շահառուի սոցիալական կարիքի կրկնակի գնահատման դեպքում՝ ծառայության տեսակների և հաճախականության վերանայում, հատուկ (մասնագիտացված) խնամքի տրամադրման դեպքում նաև՝ հոգեբանի ծառայություն անհատական վերապատրաստումների միջոցով՝ ուղղված շահառուին և (կամ) ընտանիքի անդամներին՝ կատարելով գրառում շահառուների անհատական ծրագրերում. 4) խորհրդատվական օգնություն՝ սոցիալական աշխատողի կողմից շահառուի իրավունքների ու շահերի պաշտպանություն և դրանց վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, անհրաժեշտ սոցիալական աջակցության կազմակերպում և աջակցություն սոցիալական խնդիրների լուծմանը՝ տարատեսակ փաստաթղթերի, սոցիալական ապահովության խնդիրների լուծման հարցերում, հատուկ (մասնագիտացված) խնամքի տրամադրման դեպքում նաև՝ խորհրդատվություն շահառուին և (կամ) ընտանիքի անդամներին՝ կատարելով գրառում շահառուների		

			անհատական ծրագրերում:		

Սույն նկարագրով սահմանված արդյունքային որակական ցուցանիշների գնահատման համար նախարարությունը սահմանված ժամանակացույցին համապատասխան կարող է իրականացնել կազմակերպության գործունեության մոնիթորինգ և գնահատում, որի արդյունքներն, ըստ անհրաժեշտության, քննարկվում են ծառայություն մատուցող կազմակերպության հետ, ներառյալ՝ արդյունքային որակական ցուցանիշների կատարողականի բարելավման նպատակով:

Կազմակերպությունը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից 10 օր հետո նախարարություն է ներկայացնում եռամսյակային հաշվետվություն՝ համաձայն ձևաչափի: Անհրաժեշտության դեպքում կազմակերպվում է հաշվետվության և հաշվետվության կատարողականի գնահատման արդյունքների քննարկում՝ հաշվետու կազմակերպության մասնակցությամբ:

Կազմակերպությունը օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է «Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված և խնամք ստացող տարեցների ու հաշմանդամների հաշվառման տեղեկատվական համակարգի» շահագործումը, այդ թվում՝ շահառուների տվյալների և մոնիթորինգային ցուցանիշների մուտքագրումը, խմբագրումը, հաշվետվությունների կազմումը և սահմանված՝ ամենամսյա, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ նախարարություն ներկայացումը:

Կազմակերպության աշխատանքը, ըստ եռամսյակային հաշվետվության, գնահատվում է բավարար, եթե՝

- վերը նշված արդյունքային բոլոր ցուցանիշների կատարողականի միջինացված ամփոփ գնահատականը կատարվել է նվազագույնը 80 %-ով.
- ապահովվել է շահառուների պլանային թվի նվազագույնը 80 %-ը:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

_____ տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

(կազմակերպության անվանումը)

h/h	Մատուցվող ծառայության անվանումը	Ծառայություն ստացած անձանց թիվը
1.	**Շահառուների թվաքանակը հաշվետու ժամանակահատվածի սկզբում/վերջում**	___/____
1.1	այդ թվում՝ կին	___/____
2.	**Հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը**	
2.1	այդ թվում՝ կին	

2.2	այդ թվում՝ 18-65 տարեկան	
2.2.1	այդ թվում՝ կին	
2.2.2	18-40 տարեկան	
2.2.3	40-65 տարեկան	
2.3	65 տարեկանից բարձր	
3.	**Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ)**	Ա – Բ -
4.	**Կենցաղային սպասարկում**	
5.	**Բժշկական օգնություն և սպասարկում**	
6.	**Սոցիալ-հոգեբանական օգնություն**	
6.1	այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում	
7.	**Խորհրդատվական օգնություն**	
8.	**Այլ ծառայություններ (*նշել*)**	

Կազմակերպության ղեկավար _____ «_____» _____20___թ.

(ստորագրություն, անուն,ազգանուն)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Արտակ Մանգասարյան

_____

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Նախագահ՝ Արթուր Թորոսյան

_____

(ստորագրություն)

Կ.Տ.